

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ



## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Տեսչական մարմնում Վարչության կողմից 2022 թվականի ընթացքում իրականացված ներքին հսկողության արդյունքում բացահայտված խնդիրները և ռիսկերը:

## II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

1. Ծրագրի նպատակն է Տեսչական մարմնի գործունեության բարելավումը և շարունակական կատարելագործումը:

2. Ծրագրի խնդիրն է Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտումը:

## II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

3. Տեսչական մարմինը 2022 թվականի ընթացքում աշխատել է ծանրաբեռնված ռեժիմով: 2022 թվականի ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքներին զուգահեռ իրականացրել է մի շարք չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ վարչական վարույթներ, ինչպես նաև՝ հունվարից մինչև ապրիլ ամիսը ներառյալ իրականացրել է ստուգայցեր:

Ընթացիկ տարում Տեսչական մարմնի գործունեության նկատմամբ Վարչության կողմից իրականացվող ներքին հսկողության արդյունքում հայտնաբերված խնդիրներն ու ռիսկերը արտացոլվել են Տեսչական մարմնի կառավարման խորհրդին (այսուհետ՝

Խորհուրդ) և Վարչապետի աշխատակազմին ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում:

Վարչության կողմից բացահայտված խնդիրների և ռիսկերի, այդ թվում՝ կատարված վերլուծությունների հիման վրա ներկայացվել են Տեսչական մարմնի գործունեությունը բարելավելու և առանձին գործընթացներ կանոնակարգելու առաջարկություններ, որոնց մի մասի հիման վրա կարգավորվել են առանձին խնդիրներ: Մինչ Խորհրդի նիստ հրավիրվելը՝ խնդիրն արագ լուծում տալու և բացթողումների հետագա կրկնությունները կանխարգելելու նպատակով, խնդիրների գերակշիռ մասը ներկայացվել է Տեսչական մարմնի ղեկավարին: Քննարկումների արդյունքները և ձեռնարկված միջոցառումները նույնպես ներառվել են ներկայացվող հաշվետվություններում:

4. Վարչության կողմից օրենսդրության համաձայն իրականացված ներքին հսկողության, այդ թվում՝ Վարչության 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում արձանագրված խնդիրներից հատկանշական են շարունակական բնույթ կրող խնդիրները, որոնց պարբերաբար անդրադարձ է արվել Վարչության հաշվետվություններում:

5. Կարևորագույն խնդիրներից են.

1) ստուգումների պլանավորման, կազմակերպման և անցկացման ողջ գործընթացին առնչվող և պարբերաբար արձանագրվող խնդիրները (ստուգման գործընթացի բոլոր փուլերը ներառյալ, ինչպես նաև՝ հետագա վարչական իրավախախտման վարույթ),

2) վերստուգումների պլանավորման և իրականացման, այդ թվում գործընթացի նկատմամբ հսկողության բացակայության խնդիրը,

3) վերահսկողության արդյունքում տրված կարգադրագրերի նկատմամբ հետևողականությունը,

4) փաստաթղթաշրջանառության համակարգում վարչական ակտերի նախագծերի հաստատման գործընթացին, մասնավորապես՝ համաձայնեցումներին առնչվող խնդիրները,

5) վարչական վարույթների խնդրահարույց կարճումների դեպքերը,

6) վերահսկողության համար հատկացված մարդ/օր/ֆինանսական ծախսեր համաչափության, մասնավորապես՝ ստուգման ծավալին ոչ համարժեք տևողությամբ գործուղումների հարցը,

7) ծառայողական քննությունների անցկացման որակը, դրանց արդյունքում կազմված եզրակացությունները և կիրառվող կարգապահական տույժերի համաչափությունը,

8) աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսումների գործընթացում արձանագրված առանձին խնդիրները,

9) Տեսչական մարմնի դեմ բերվող բողոքների արդյունքում կայացված վճիռների և որոշումների վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները, մասնավորապես՝ բողոքների բավարարման պատճառների կրկնվող բնույթը, արդյունքում՝ իրավական աջակցության բաժնի լրացուցիչ ծանրաբեռնումը բողոքարկման վարույթներով և դատական գործընթացներով:

Հարկ է նշել, որ Վարչության առաջարկությամբ 2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնում սկսվել է կիրառվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով՝ «Վարչական ակտը վերանայելը վերադասության կարգով», սահմանված դրույթը:

10) Տեսչական մարմնի կողմից ներկայացվող հաշվետվությունների և տվյալների արժանահավատության խնդիրը, վերլուծությունների բացակայությունը,

11) ստորաբաժանումներում աշխատողների ծանրաբեռնվածության, աշխատանքների համաչափ բաշխման հետ կապված խնդիրները,

12) Տեսչական մարմնի, մասնավորապես նոր ընդունվող աշխատողների, մասնագիտական կարողությունների կատարելագործման անհրաժեշտությունը,

13) Տեսուչների կողմից տնտեսավարող սուբյեկտներում դրսևորած վարքագծի և արհեստավարժության վերաբերյալ ստացված բացասական արձագանքները,

14) այլ խնդիրները:

#### IV. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
HEALTH AND LABOR INSPECTION BODY  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129  
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ [info@hlib.am](mailto:info@hlib.am)

Որակի ապահովման վարչության  
տարեկան գործունեության ծրագիր 2023թ.

6. 2023 թվականին նախատեսվող միջոցառումները ներկայացվում են առանձին ուղղություններով՝ ելնելով որակի ապահովման վարչությանն օրենսդրությամբ վերապահված լիազորություններից, ինչպես նաև՝ հաշվի առնելով Տեսչական մարմնում 2022 թվականի ընթացքում ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրները և ռիսկերը (Հավելված 1):

### **1) Կարգապահական կանոնների պահպանում.**

Նախատեսվում է ուսումնասիրել բոլոր ծառայողական քննությունների գործերը, քննության անցկացման բազմակողմանիությունը և անկողմնակալությունը, բոլոր հարցերի և հանգամանքների լիարժեք պարզաբանումը, համապատասխան եզրակացության կազմումը, կարգապահական տույժերի կիրառման սահմանված ընթացակարգի պահպանումը, կիրառված տույժի համաչափությունը: Նախատեսվում է նաև իրականացնել աշխատաժամանակի ռեժիմի պահպանման նկատմամբ հսկողություն՝ ինչպես մուտքի/ելքի գրանցող սարքերի տվյալների ուսումնասիրմամբ, այնպես էլ տարածքային ստորաբաժանումներ այցերի միջոցով, այդ թվում՝ անակնկալ:

Նախատեսվում է նաև ուսումնասիրել աշխատողների ամսական խրախուսումները և դրանց հիմնավորումները:

### **2) Տեսչական մարմնի դեմ բերված բողոքներ.**

Նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի, նրա աշխատողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված յուրաքանչյուր բողոքի ընթացքի և արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն, բողոքների պատճառների բացահայտում:

Նախատեսվում է ուսումնասիրել Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ հանրությունից և տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված արձագանքները (թեժ գծով զանգեր, նամակներ, հրապարակումներ և այլն), ինչպես նաև կատարել հարցումներ:

**3) Տեսչական մարմնի գործունեության արդյունքների** նկատմամբ ներքին հսկողությունը նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի փաստացի

գործունեության, մասնավորապես՝ վերահսկողության և կանխարգելիչ գործունեության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Այս ուղղության շրջանակներում մասնավորապես նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն սույն Ծրագրի 5-րդ կետով նշված խնդիրների և ռիսկերի վերաբերյալ: Ինչպես նաև.

- **Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի** նկատմամբ ներքին հսկողության շրջանակներում նախատեսվում է իրականացնել այդ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովումը, սահմանված ժամկետների պահպանումը և արդյունքը, բացահայտել միջոցառումների կատարմանը խոչընդոտող խնդիրները և ռիսկերը:

- **Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը, որպես** առանձին միջոցառում, նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով՝ Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված կատարողականի գնահատման մեթոդաբանության համաձայն:

#### **4) Կադրային համալրում, աշխատողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործում.**

Նախատեսվում է Տեսչական մարմնի առանձին ստորաբաժանումների/ուղորտների աշխատողների հետ իրականացնել քննարկումներ Վարչության կողմից բացահայտված խնդիրների, ռիսկերի, բացթողումների և թերացումների վերաբերյալ՝ դրանց հետագա կրկնությունները կանխելու նպատակով: Ինչպես նաև.

- Ուսումնասիրել Տեսչական մարմնում կադրային համալրման գործընթացը,
- ստորաբաժանումներում աշխատողների ծանրաբեռնվածության համաչափությունը:

## **V. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

7. Որակի ապահովման վարչության պետը յուրաքանչյուր եռամսյակ Խորհուրդ է ներկայացնում հաշվետվություն՝ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրների և բացահայտված ռիսկերի վերաբերյալ՝ ներկայացնելով առաջարկություններ Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ (Հավելված 2, Ձև 1):

## VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Ծրագրով նախատեսված միջոցառումները ներառում են որակի ապահովման վարչության կողմից Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտման և գնահատման գործողությունների նկարագրությունը:

9. Ներքին հսկողության ընթացքում ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իր գործունեության ընթացքում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների պահպանումը:

10. Որակի ապահովման վարչությունն իր գործունեությունն իրականացնում է անկախության և անկողմնակալության սկզբունքներով:

11. Որակի ապահովման վարչության աշխատողները Ծրագրի իրականացման ընթացքում պարտավորվում են գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների, ինչպես նաև չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ
<b>I. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ, ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ</b>			
1	Կարգապահական կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում է.</p> <p>1) ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների պահպանման վիճակը, արձանագրված խախտումները, ձեռնարկված միջոցառումները, ծառայողական քննությունների նշանակումը, ընթացքը և արդյունքները:</p> <p>2) աշխատաժամանակի ռեժիմի պահպանումը՝ մուտքի/ելքի սարքի տվյալների ուսումնասիրությամբ,</p> <p>3) արձակման և գործուղման թերթիկների ուսումնասիրություն,</p> <p>4) աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները, դրանց հիմնավորումները:</p> <p>5) ստորաբաժանումների/աշխատողների կատարողական կարգապահությունը՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմից ստացված, ինչպես նաև Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականների, հրամանների կատարումը, հաշվետվությունների ժամանակին և պատշաճ ներկայացումը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում ժամկետների պահպանումը և կատարողական կարգապահությանն առնչվող այլ հարցեր:</p>	<p>յուրաքանչյուր դեպքում</p> <p>յուրաքանչյուր ամիս</p> <p>ընթացիկ</p> <p>յուրաքանչյուր ամիս</p> <p>յուրաքանչյուր ամիս</p>
2	Բարեվարքության կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում է.</p> <p>1) վարքագծի կանոնների (այդ թվում՝ նվերներ ընդունելու արգելք, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, շահերի բախում) խախտումների վերաբերյալ ներկայացված բողոքները և արդյունքը:</p>	յուրաքանչյուր դեպքում



## II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

3	Վերադասությամբ և դատական կարգով ներկայացված բողոքների ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված բողոքները.</p> <p>1) Տեսչական մարմին ներկայացված բողոքներ, բողոքարկման վարույթների ընթացք, ընդունված որոշումներ, բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն,</p> <p>2) դատական կարգով բողոքարկված գործեր, ընդունված վճիռներ/որոշումներ, բավարարված վճիռների/որոշումների պատճառների վերլուծություն:</p>	<p>յուրաքանչյուր դեպքում՝ վճոհ/որոշման ընդունումից հետո</p>
4	Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ ստացված արձագանքների վերլուծություն և գնահատում	<p>Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ հանրությունից և տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված արձագանքները.</p> <p>1) թեժ գծով զանգեր,</p> <p>2) նամակներ, հրապարակումներ, հարցումներ:</p>	<p>յուրաքանչյուր ամիս</p> <p>յուրաքանչյուր դեպքում</p>

## III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

5	Վերահսկողական աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում և վերլուծվում են.</p> <p>1) եռամսյակային պլանավորում, հանձնարարագրի հրապարակում, ծանուցում, մուտք, ավարտ՝ ժամկետների պահպանում, ընդունվող վարչական ակտերի համաձայնեցման գործընթաց,</p> <p>2) մարդ/օր հաշվարկ՝ ստուգման ծավալին համարժեքություն,</p> <p>3) գործուղումներ՝ հիմնավորումներ:</p>	<p>յուրաքանչյուր ամիս</p> <p>յուրաքանչյուր եռամսյակ</p>
6	Վերստուգումների գործընթացի ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում են.</p> <p>1) Վերստուգումների պլանավորում, ժամկետների պահպանում, վարչական ակտերի համաձայնեցման գործընթաց,</p> <p>2) մարդ/օր հաշվարկ՝ վերստուգման ծավալին համարժեքություն, գործուղումների հիմնավորումներ:</p>	<p>յուրաքանչյուր ամիս</p>

7	Հաշվետվությունների հավաստիության ուսումնասիրություն	Ուսումնասիրվում են. 1) Հաշվետվություններով ներկայացված տվյալների և ցուցանիշների համապատասխանությունը իրական տվյալներին,  2) Էլեկտրոնային գրանցամատյանների պատշաճ լրացման և վարման գործընթացը:	Ըստ ներկայացման հաճախականության մշտապես
8	Կարճված վարչական վարույթների կարճման հիմքերի ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում են. 1) կարճման որոշումների հիմքերը և կարճման իրավաչափությունը:	2-րդ եռամսյակ
9	Վարչական վարույթների արդյունքում տրված կարգադրագրերի նկատմամբ հետևողականության ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) վարչական վարույթի արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրված կարգադրագրերի նկատմամբ հետևողականությունը, սահմանված ժամկետների պահպանումը:	3-րդ եռամսյակ
10	Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը, նախատեսված ժամկետների պահպանումը:	նախատեսված ժամկետների համաձայն
11	Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը, նախատեսված ժամկետների պահպանումը:	նախատեսված ժամկետների համաձայն
12	Պաշտոնական կայքէջի գործարկման և տեղեկատվական սպասարկման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը, կայքէջի թարմացման հաճախականությունը, տեղադրված տեղեկատվության արդիականությունը, Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման մակարդակը, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով պահանջվող տեղեկատվության հրապարակումը:	մշտապես
13	Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը ըստ հաստատված չափորոշիչների	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքները և գնահատվում կատարողականը՝ համաձայն Խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված մեթոդաբանության:	յուրաքանչյուր եռամսյակ

**IV. ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՐՈՒՄ, ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**



14	Կադրային համալրման, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունը, հաստիքների համալրման գործընթացը, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների բարելավմանն ուղղված միջոցառումները, նախատեսված ժամկետները, արդյունքը:	յուրաքանչյուր եռամսյակ
15	Ստորաբաժանումների/ոլորտների աշխատողների հետ քննարկումների կազմակերպում	Քննարկման թեմա. 1) Ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրներ և ռիսկեր, առաջարկվող լուծումներ: Տեսուչների վարքագիծը տնտեսավարող սուբյեկտներում:	2-3-րդ եռամսյակներ
16	Ստորաբաժանումներում աշխատողների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է ստորաբաժանումներում ղեկավարների կողմից աշխատողների միջև աշխատանքների համաչափ բաշխումը և ռոտացիան:	4-րդ եռամսյակ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Հաշվետվությամբ ընդգրկված ժամանակահատված՝ 2023 թվականի ----- եռամսյակ

1. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

2. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

3. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

